№ 180 Նոյեմբերի 22 Երեքշաբթի 1883 Նոյեմբերի 22 Երեքշաբթի № 180

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Մшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ"

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ **1884** ԹՒԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ դիտութեան ամեն տիպերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։
ՀԱՏՈՎ, համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷ։ *Тифлисъ, редакція «Мшакъ».*

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ղարսից։ Նամակ խմբագրին։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Գործակատարի յիշատակարանից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

—

Նոյեմբերի 14-ին

Ամսիս 9-ին, ախալքալաքցի պ. Մանուկ Գրիգորեանցի տանը, ուր պատիւ ունէի ինքս գտնվելու, հայկերոյթի ժամանակ պ. Կարապետ խաչատուրեանը զանազան կենացներից յետոյ բարեմաղթելով մեր հայոց բոլոր ուսումնարաններին առաջադիմութիւն և երկար կեանք, մասնաւորապէս, երկու խօսքով հրաւիրեց բոլոր հանդիսականների ուշադրութիւնը Ղարսի երկսեռ ուսումնարանների ներկայ աննախանձելի դրութեան վրա, առաջարկելով իւրաքանչիւրին իր ցանկացածի չափ փող նուիրել յօգուտ յիշեալ ուսումնարանների։ Հանդիսականները, ինչպէս և ամեն տեղ այդպիսի խնջոյքներում, ամենայն ուրախութեամբ ընդունեցին պ. խ. առաջարկութիւնը և երկու րոպէում գումարվեց 66 ռուբլի 22 կոպէկ։ Այդպիսի գովելի օրինակները մեզ լաւ ապացոյց են, թէ որպիսի սերտ սիրով է կապված ամեն մի տեղի հասարակութիւնը իր ուսումնարանների հետ և թէ որպիսի պատրաստականութեամբ կարկառում է նա իր օգնութեան ձեռքը դէպի այդ ուսման և բարոյականութեան տաճարը։ Բայց թէ այդ տաճարների գործիչները աշխատում են արդեօք խոհեմութեամբ և ժրաջանութեամբ արդարացնել հասարակութեան յոյսերը—ցաւօք սրտի պիտի ասեմ՝ ոչ... Ղարսի ուսումնարանների երեք անձանց անձնուէր գործունէութիւնը, անյոգնելի և միանգամայն անվարձատրելի աշխատութիւնը, այո, անուրանալի է, բայց թէ ինչն է պատճառը, որ այդ ուսումնարանները իրանց հինգ տարվայ գոյութեան շրջանում ոչինչ արդիւնք չեն ցոյց տուած հասարակութեանը և չը կարծեմ թէ ցոյց տան, որովհետև նրանք հոգեւարքի մէջ են արդէն, չը նայելով, որ այդ հինգ տարվայ շրջանում հասարակութիւնը ոչինչ չէ խնայել նրանց առաջադիմութեան և երկարատեւութեան համար, յայտնի չէ։ Գործին մօտ անձինքներից լսում եմ, որ տեղիս թէ եկեղեցական և թէ ուսումնարանական դրամական հաշիւները ամենախառն և մասամբ անյայտ դրութեան մէջ են գտնվում, որի պատճառով և հասարակութիւնը, տեսնելով որ բոլորովին ապարդիւն կորչում են իր վաստակած կոպէկները, սաստիկ վրդովված է և, կարծեմ, հրաժարվում է այսուհետև չարունակել իր առատ նուիրատուութիւնները սիրելի ուսումնարանների գոյութիւնը պահպանելու համար։ Ահա թէ որպիսի ապագայ է պատրաստվում մեր թշուառ ուսումնարանների համար։ Այս տխուր հեռանկարները ի նկատի ունենալով, չը կայ մէկը, որ գտնէ հրապարակաւ կամ լրագրութեան միջոցաւ պարզաբանէ այդ բոլոր շփոթութիւնները, հանդարտեցնէ հասարակութեան լարված մտքերը, ներկայացնելով նրան թէ ուսումնարանների և թէ եկեղեցու մանրամասն հաշիւները, և, այդպիսով, նորից տրամադրէ նրան ամեն ժամանակ իր սովորական առատութեամբ օգնել և պահպանել իր ուսումնարանները... Ահա թէ ինչ կը խնդրէինք այն պարոններից, որոնք առաւել տեղեակ լինելով այդ տխուր հանգամանքների հետ, կաշխատէին չուտով մատուցանել այդ ծառայութիւնը 'ի սէր ուսումնարանների...

Դառնալով նորից մեր գլխաւոր նպատակին, պարտականութիւն եմ համարում հրապարակաւ յայտնել, որ տեղիս յայտնի երեք գործող հայ բժիշկները ամեն մի խնջոյքում, ուր գտնվի նրանցից մէկը, իրանց հեղինակութեամբ բարոյական պարտք են դնում ամեն մի թուղթ խաղացողի վրա մի որոշ գումար նուիրել յօգուտ տեղիս հայոց երկսեռ ուսումնարանների, որպէս տուգանք, որի միջոցաւ և յիշեալ խնջոյքում գումարվեց 27 ռուբլի, որը հանդիսականների նուիրած 66 ռուբլի 22 կոպէկի հետ միասին անում է 93 ռուբլի 22 կոպէկ, որ և յանձնեցին բժիշկ Տ. Յարութիւնեանցին հասցնել ուր հարկն է։ Վերջացնելով խօսքերս պարտք եմ համարում ինձ հրապարակաւ յայտնել եմ խորին շնորհակալութիւնը պ. պ. Մաթուկ Գրիգորեանցին, և բժիշկ Տ. Յարութիւնեանցին, որոնցից առաջինը իր հիւրասիրութեամբ պատճառ եղաւ այդ գովելի գործին, իսկ երկրորդը իր ազդեցութեամբ ստիպում է թուղթ խաղացողներին նախապէս կատարել իրանց բարոյական պարտականութիւնը դէպի ուսումնարանները։

Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 19 Նոյեմբերի

Վերջին ժամանակները «Մշակի» էջերում ընկնում են երևալ զանազան լուրեր ու նկատողութիւններ Թիֆլիսի քաղաքային Արհեստագործական ուսումնարանի ներքին կեանքին վերաբերմամբ։

Չեմ ուզում խօսել երկու փոքրիկ լուրերի մասին, որոնք վերաբերվում էին ուսումնարանի անմունդ և իբր թէ վնասակար կերակուրներին, որոնք իբր թէ ուսումնարանի մի աշակերտի մահի պատճառ են դարձել...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

—

«Խաչի—ասացի ինքս ինձ, պառկելով անկողնում այդ երեկոյեան—բաղդը քո երեսիդ ծիծաղում է, աղա Գուլամեանցներին կուրացրել ես, մանրավաճառ Թորոսի խօսքերը կատարվում են, դու արդէն մտել ես նրանց դրպանը։ Այժմ քեզ պակաս միայն Թամարը, եթէ սրան ևս ճանկես, այն ժամանակ քո մի քանի տարի առաջ երևակայած հաւաւոր ապագան այլ ևս իրականացած է. ուրեմն աշխատիր Թամարին էլ ձեռք բերել։ Խոհամանկութիւնը, շողոքորթութիւնը, կեղծաւորութիւնը, ստախօսութիւնը, խաբեբայութիւնը զօրեղ միջոցներ են, նրանք օգնել են քեզ մինչև այսօր, կօգնեն քեզ և այսուհետև, մի բաց թողիր ձեռիցդ այդ միջոցները»։

* * *

Արդէն երեք տարի էր, որ ես Ռուսաստան էի գտնվում։ Թէ ինչպէս էի ես անցկացրել իմ ժամանակը այդ երեք տարվայ ընթացքում—այդ էր մի երկար պատմութիւն, եթէ ես գրէի իմ յիշատակարանում։ Այսքանը միայն կասեմ, որ իմ կեանքը շատ ուրախ և զուարճալի էի անցկացնում Ռուսաստանում, երբ Աբրահամ աղան այնտեղ չէր լինում։ Այդ ժամանակ ես որ քաղաք որ գնում էի՝ ամենաառաջին հիւրանոցումն էի իջնում, ամենաթանգագին և ամենաընտիր կերակուրներն էի ուտում, ամենանուրբ եւրոպական խմիչքներն էի խմում։ Գիշերները մինչև լոյս անց էի կացնում զանազան զուարճատեղերում, թատրոնում, օպերայում, ցիրկերում յաճախում, էի ամենաշռայլ ամենաանբարոյական հիմնարկութիւններ, ու միշտ հարբած դրութեան մէջ լինելով փողերը շպրտում էի այս ու այն կողմը, բաշխում էի այս կամ այն հուրիին։ Պատահել են այնպիսի ժամանակներ, որ ես, այս կամ այն ինձ նման գործակատարի ձեռից նրա սիրեցեալ տարփածուին ջգրու խլելու համար, չէի խնայում հարիւրանոցներ։ Մի խօսքով այդ երեք տարին ես անց եմ կացրել իմ կեանքում շատ շքեղ և շատ ուրախ, իմ օրերը սահում էին աննկատելի կերպով, ես ինձ զգում էի դրախտի մէջ։ Փողի համար մտածել չը կար. աղա Գուլամեանցների դրպանը ինձ համար բաց էր։

Իսկ երբ Աբրահամ աղան գալիս էր, ես իսկոյն հագուստս էլ բնակարանս էլ, ուտել խմելս էլ փոխում էի և սկսում էի չափաւոր կեանք վարել. որպէս զի իմ համեստութիւնը ցոյց տամ նրան։

Այդպէս անցան իմ կեանքի առաջին երեք տարիները մինչև որ պատահեց մի անսպասելի դէպք, որը այնուհետև կրկին փոփոխութեան ենթարկեց իմ վիճակը։ Առևտրի խառն ժամանակն էր. ես գտնվում էի Նիժնիյ-Նովգորոդեանոնավաճառում, իսկ Աբրահամ աղան Մոսկվայում։ Մի օր յանկարծ ստացայ Մոսկվայից մի հեռագիր թէ Աբրահամ աղան մահամերձ հիւանդ է և պահանջում է ինձ։ Ես իսկոյն նոյն օրը ճանապարհվեցի թողնելով բոլոր գործերը տակն ու վրա։

Աբրահամ աղային ես իսկապէս գտայ մահամերձ դրութեան մէջ։

—Այս ինչ է պատահել ձեզ, աղա, ինչ քամբազութեան հասցրեց ինձ Աստուած—գոռացի ես լացի ձայնով, ընկնելով նրա մահճակալի վրա և համբուրելով նրա ճակատը։

—Խաչի, քո աղան մեռնում է—պատասխանեց նա թոյլ ձայնով։

«Ջհանդամը որ մեռնում է, մի քիչ էլ վաղ-պիտի մեռնէիր»—ասացի ես մտքումս։

—Աստուած ոչ անի, ինչ ես ասում, աղա։

—Չէ, մեռնում եմ, Խաչի, այն անիծմտանքը իմ տունը քանդեց—շարունակեց Աբրահամ աղան անքաղքնքալով գլուխը բարձրացնելով բարձի վրայից։

—Ո՞վ է ձեր տունը քանդել, աղա, ինչ էք հրամայում—հարցրի ես զարմացած։

—Հրէայ Շաբաթը տունս քանդեց, նա... քառասուն հազար... քառասուն հազար... ախ...

Աբրահամ աղան չը կարողացաւ աւարտել իր խօսքը, նրա թուլացած գլուխը ընկաւ կրկին բարձի վրա, ես նկատեցի նրա աչքերում արտասուք։

—Ի՞նչ քառասուն հազար, աղա, ասացէք տեսնեմ ինչ է արել այն անիրաւ Շաբաթը ձեզ հետ։

—Փողերս կուլ է տալիս... հաչա է անում... ասում է պարտական չեմ։

—Ո՞ր փողերը։

Այս տարվայ Փոտոգէնի փողերը, ասում է տուել եմ Խաչիին, կերաւ, կերաւ այն անխղճմտանքը... էն, էն...

Աբրահամ աղայի ձայնը դարձեալ ընդհատվեց։ Ես հասկացայ թէ բանը ինչումն է։ Երկու ամիս առաջ՝ հրէայ Շաբաթի վրա ծախել էի 20 հազար պուդ Փոտոգէն՝ իւրաքանչիւր մի պուդը երկու ռուբլով և փողերը զուտ ստացել։ Թէ ինչ էի արել 40 հազարը—այդ իմ գործն է, իսկ Աբրահամ աղային յայտնել էի թէ ապառիկ եմ ծախել։

«Խաչի, զգուշացիր, բանդ նեղ տեղ է ընկել»—ասացի ինքս ինձ։

Մի փոքր միջոցից յետոյ եկաւ բժիշկը. ես նրանից հարցրի Աբրահամ աղայի յանկարծակի հիւանդութեան պատճառը։

—Կաթուածահար է եղել—պատասխանեց բժիշկը։

—Ինչից է պատահել։

—Լիարիւն մարդկանց հետ այդ շատ ստէպ է պատահում, երբեմն ամենաչնչին պատճառներից։ Աբրահամ աղայի կաթուածի պատճառը եղել է նրա չափազանց բարկութիւնը։ Պատմում են թէ նա գնացել է մի հրէայի մօտ իրան հասանելի մի մեծ գումար ստանալու, բայց հրէան մերժել է նրան, հրաժարվելով իր պարտքից։ Աբրահամ աղան լսելով այդ անսպասելի մերժումը, խիստ բարկութիւնից ուշաթափվել է և հէնց այնտեղ ընկել կաթուած ստանալով։

—Այժմ յոյս կայ, որ նա առողջանայ, թէ ոչ։

—Դժուար թէ. հարուածը շատ սաստիկ է եղել, ես մինչև անգամ յոյս չունեմ, որ նա մինչև երեկոյ ապրել կարողանայ։

«Աստուած տայ որ չապրի»—ասացի ես մտքումս, խորը հառաչելով։ Բժիշկը 'ի հարկէ այնպէս իմացաւ, որ ես ցաւալուց եմ հառաչում։

—Խաչի—դարձաւ ինձ Աբրահամ աղան բժշկի հեռանալուց յետոյ։

—Հրամայեցէք աղա։

—Ես մեռնում եմ, Ներքի ինձ, ես քեզ շատ եմ նեղացրել, շատ չարչարել, ի զուր տեղը շատ եմ հայհոյել, յիշոցներ տուել, ես քո առաջ մեղաւոր եմ, Ներքի...

Հրապարակաւ մեղադրել մի ուսումնարանի վարչութիւնը իր սանիկներից մէկի մահում, այլ խօսքերով—մարդասպանութեան մէջ—դա մի այնպիսի քայլ է, որ դրա անողը, անշուշտ պէտք է ունենայ իր ձեռքում անհերքելի փաստեր. ուրեմն եթէ այդ պարոնը ունէր մի փոքր ազնուութիւն, անվախ պէտք է առաջ գար, իբրև ազնիւ բողոքող հասարակական եղեռնագործութիւնների դէմ։ —Մինչև այժմ մենք սպասում էինք այդ բանին, բայց դժբախտաբար բողոքողը մնաց մութ խաւարի մէջ...

Այդ տեսակ զրպարտութիւնները կարող են լիովին սպանել մի ուսումնարան, որ բոլոր ուսումնարանների մէջ մեզ ամենահամակրելի պէտք է լինի։ Ասացէք, խնդրեմ, այդ տեսակ զրպարտութիւններից յետո, էլ ո՞ր գաւառացի մաքով անցամ կանցկացնի գալ Թիֆլիս յատկապէս Արհեստագործական ուսումնարան մտնելու նպատակով։ Թիֆլիսի Արհեստագործական ուսումնարանը մի սպանդանոց է, ուր մորթում են մեր որդկերանց, կարող է կարծել ամեն մի գաւառացի։

Եթէ ուսումնարանը իրաւ երբեմն վատ է կերակրել, կարելի էր այդ չարիքի առաջն առնել բոլորովին ուրիշ ճանապարհներով։ Մինթէ նոյն իսկ բնտանիքներում չէ պատահում, որ երբեմն խոհարարի բերած միսը հոտած է լինում, կամ իւղը վատ, ուր մնաց ուսումնարանները։ Ո՞ւմ յայտնի չէ, որ կան ուսումնարաններ, որոնք ծախսում են եօթանասուն հազարներ տարէնը և դարձեալ չեն կարողանում օրինաւոր կերակրել 30-40 աշակերտի, այն ինչ Արհեստագործական ուսումնարանը ծախսում է գուցէ վերոյիշեալ գումարի կէսը և գիտէք ամեն օր ճաշին քանի մարդ է նստում. ոչ թէ 30—40, այլ 250—270 մարդ։

Թողնենք այդ բոլորը և դիմենք այն վերջին լուրին, որ վերաբերվում է ուսումնարանի դասատու արժանապատիւ հայր Արսէն քահանայ Բագրատունուն։

Ինչպէս յայտնի է Արհեստագործական ուսումնարանը լի է վերին աստիճանի չքաւոր աշակերտներով, դրանցից ոմանք թոչակ են ստանում Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութիւնից, ոմանք ուսումնարանի վարչութիւնից, իսկ ոմանք մնացել են առանց օգնութեան։ Վերջինները շատ ու շատ անգամ դիմել են նաև հայր Արսէնին, որը, ինչպէս լաւ յայտնի պէտք է լինի պ. լրատուին (չէ՞ որ նա ձգտում է մեզ երևալ ուսումնարանի ներքին կեանքին տեղեակ), որը, ասում եմ ես, որքան ինձ անձամբ յայտնի է, երբ կարողացել է, երբէք չէ մերժել և օգնել է իր սեպհական սուղ միջոցներից։

Բացի այդ պատուարժան քահանան դիմել է ուսումնարանի բոլոր հայ աշակերտներին բուն քրիստոնէական խորհրդով և խրատով—օգնել միմեանց, ով ինչ չափով կը կարողանայ։

Միթէ՞ խրատել-քարոզել մինչև անգամ չքաւորներին փոխադարձ ընկերական օգնութիւնը—նշանակում է «ստիպել» ում և իցէ կատարել իր բարոյական պարտաւորութիւնը։

Մարդ պէտք է ապուշ լինի, որ չը կարողանայ հասկանալ տէր հօր բարի խրատի (որ մասամբ իրագործված փաստ պէտք է համարել) բարոյական ու կրթիչ նշանակութիւնը։

Իսկ ինչ կը վերաբերի պ. լրատուի կարճամիտ խորհուրդին, որ տէր հայրը փոխանակ չքաւոր աշակերտների ընկերներին դիմելու աւելի լաւ կանէր, եթէ նա դիմէր իր հարուստ ծուխին, որ նա օգնութեան ձեռք կարկառէր չքաւոր աշակերտներին, մենք մի պատասխան ունենք. «նա, տէր-հայրը, ունի աւելի մեծ պարտականութիւններ, և մեզանից ոչ մէկը իրաւունք չունի պնդելու, որ նա բացի այդ պարտականութիւններից ստանձնի և մեր ուզածները։»

Խնդրեմ, յարգելի խմբագիր, տեղ տաք ձեր լրագրում երկտող նամակիս, նախ՝ ինձ միջոց տալու իմ կարծիքը յայտնելու տէր-հօր առաջարկութեան մասին և երկրորդ՝ ցոյց տալու, որ այդ տեսակ անհիմն և աղճատած փաստերի լուր տուողը «Մշակիդ», ինչպէս կարծում են ոմանք, չէ կարող լինել տպագրական խօսքի և ձեզ յարգող։

Թիֆլիսի Արհեստագործական Ուսումնարանի ուսուցիչ՝ Գաբ. Միրզոյեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ Չինաստանի հիւսիսում ժանտախտ յայտնվեցաւ։ Շանխայի մէջ երկու ամսվայ ընթացքում մեռել են 15000 հոգի։ Ֆրանսիական կալուածներում գործադրվում են անհրաժեշտ առողջապահական բոլոր միջոցները։

—Լօնդոնի մէջ ստացված հեռագիրը հաղորդում է, թէ չինական կառավարութիւնը կայսրութեան տասն և եօթ փոխարքաներին մի շրջաբերական ուղարկեց, որով յայտնում է իր հաստատ վճիռը մաքառել մինչև վերջին չունչը ֆրանսիացիներին երկրի մէջ չը թողնելու համար։ Այդ նպատակով 120000 զօրք է պատրաստվում։

—Բէլգրադից «Presse» լրագրին ուղարկված պաշտօնական հեռագրից երևում է, որ վերջին ապստամբութեան ժամանակ 15 զինուորներ սպանված են և 100 վիրաւորված, իսկ ապստամբները կորցրել են 300 հոգի։

—Սիլեզիայի լրագիրը հաղորդում է, որ սուրհանդակի հետ Ֆրիդրիխսրուէից մի նշանաւոր զօկումենտ ուղարկվեցաւ Մադրիդ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պապական «Moniteur de Rome» լրագիրը բաւական օտարոտի տեղեկութիւններ է հաղորդում Փարիզի չինական դեսպան մարկիզ Ցէնգի մասին։ Այդ տեղեկութիւնները շատ զգուշութեամբ պէտք է ընդունել, թէպէտ լրագիրը շատ տեղեակ է համարվում եկեղեցուն և հոգևորականութեան վերաբերեալ հարցերում։ Չինական դեսպանը, լրագրի խօսքերով, նախկին եզուիտ է։ Նա կրթութիւն է ստացել եզուիտների ուսումնարանում և ընդունված է եղել նրանց միաբանութեան մէջ, բայց յետոյ հրաժարվել է հոգևորական կոչումից։ Մարկիզ Ցէնգ կաթոլիկ է ծնվել, որ շատ հնարաւոր է, որովհետև եզուիտները վաղուց յաջողութեամբ գործում էին Չինաստանում, այնպէս որ, շատ կարելի է, մարկիզ Ցէնգի ծնողները կաթոլիկութիւն ընդունած լինէին։ Չինական դեսպանը, վերոյիշեալ լրագրի խօսքերով, կաթոլիկ է մնացել։ Ասում են նոյնպէս, որ մարկիզի տիրոջը դեսպանը իրաւունք չունի կրել։ Այսուամենայնիւ, մարկիզ Ցէնգ շատ խելօք մարդ է և ֆրանսիական դիպլոմատները պէտք է զգոյշ լինեն։

ՀՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 18 նոյեմբերի։ Ֆէրրի, պատասխանելով Կլէմանսօի հարցին, յայտնեց, որ չինական շրջաբերականը Ֆրանսիացիների արշաւանքի մասին Բակնինգի վրա այնքան տարաձայնութիւն չէ նշանակում, որքան բանակցութիւնները շարունակելու համար վերջնակէտ։

ԼՕՆԴՕՆ, 18 նոյեմբերի։ Նոյեմբերի 16-ին այստեղ կալանաւորված է Ֆրանսիացի Բօնդուրօն, որ մեղադրվում է Վօլֆի հետ համախոհ լինելու մէջ։ Վերջինը մտադիր էր ճայթեցնել գերմանական դեսպանատունը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերի։ Պատերազմական մինիստրը, Ս. Պետերբուրգ վերադառնալով, սկսեց իր պաշտօնավարութիւնը։ Լրագրական լուրերը գարեջրի ակցիզը բարձրացնելու նախագծի մասին ճիշդ չեն։ Այդպիսի ենթադրութիւն դեռ ևս չը կայ։ Ֆինանսների մինիստրութիւնը առժամանակ տեղեկութիւններ է հաւաքում գարեջրի արդիւնաբերութեան մասին Ռուսաստանի և արտասահմանի մէջ և ենթադրութիւններ է անում գարեջրի գործարանների ակցիզի փոփոխութիւնների վերաբերեալ հարկը աւելի հաւասարութեամբ բաժանելու դիտաւորութեամբ։ Այսպէս թէ այնպէս նախագծի ներկայացնելուց առաջ ենթադրված փոփոխութիւնները քննելու համար մինիստրութիւնը կը հրաւիրէ գարեջուր արդիւնաբերողների ներկայացուցիչներին։ Կառավարչական յանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար Նիկոլաեվսկի երկաթուղու նոր տարիֆի և ընդհանրապէս երկաթուղիների տարիֆի վրա կառավարչական հսկողութիւն ունելու հարցերը քննելու համար ռուսաց արդիւնաբերութեանը և առևտրին նպաստող ընկերութիւնը, յանձնաժողովի նախագահի առաջարկութեամբ նշանակեց երկու ներկայացուցիչներ։

ԲԵՐԼԻՆ, 18 նոյեմբերի։ Այստեղ եղած գերմանական դեսպանը ռուսաց կառավարութեան մօտ, Շվէյցիից, հրաւիրվեցաւ Վիլհելմ կայսրից ճաշի և կայսրին որսի ուղեկցելու համար։

ԼՕՆԴՕՆ, 18 նոյեմբերի։ Այսօր դատարանին ներկայացած Վօլֆ և Բօնդուրօն սոցիալիստներին պրոկուրորը մեղադրում է դիտաւորութիւն ունենալու մէջ յայտնել պոլիցիային գոյութիւն չունեցող դաւադրութեան մասին դրամական ընծայ ստանալու նպատակով։ Գործի քննութիւնը յետաձգված է մի շաբաթով։

ՄԱԴՐԻԴ, 18 նոյեմբերի։ Վիլհելմ կայսրը սպանիական թագաւորին ուղարկած հեռագրով շնորհակալութիւն է յայտնում թագաժառանգի ընդունելութեան համար և հաւաստիացնում է իր մշտական բարեկամութեան մասին։

—Ի՞նչ էք հրամայում, աղա, ես ինչ մարդ եմ, որ դուք ինձանից ներողութիւն էք խնդրում։

—Չէ, ներիր.. ներիր. ես քեզ կենդանու նման չարչարել եմ, ես քեզ երբէք մարդու տեղ չեմ դրել, ես միշտ քեզ իմ կօշիկներից ստոր եմ համարել, ներիր, ես քո առաջիդ մեղաւոր եմ։ Բացիր այն սնդուկը, նրա մէջ հինգ հազար մանէթ փող կայ, վերցրու քեզ եմ բաշխում, մեղքերիս փոխարէն։

—Ինձ փող հարկաւոր չէ, ինձ կեանքն է հարկաւոր, աղա—ասացի ես և իսկապէս արտասվեցի։

—Հեռացրիր, որ Մակար աղան չուտով ճանապարվի, որ գոնէ գայ դիակիս հանի։

—Այս րոպէիս կը կատարեմ ձեր հրամանը։

Աբրահամ աղան մինչև երեկոյ սաստիկ տաքութեան մէջ էր. նա ցնորված խօսում էր երկար, շուտ շուտ գոռալով «կերա, կերա, անխղճմտանք Շաբաթը կլանեց, քառասուն հազար... քառասուն հազար միասին... բռնեցէք նրան, բանտ ձգեցէք, կողոպտեց, տունս քանդեց»...

Խրիկնաղէմ նրա լեզուն կտրվեց. իսկ գիշերվայ կէսին հոգին աւանդեց։ Առաւօտեան ես հեռագրեցի Մակար աղային նրա մահուան մասին։ Ես քըրքրեցի Աբրահամ աղայի սնդուկը և բացի հինգ հազարից ոչինչ չը գտայ։

«Այդ էլ մի բան է»—ասեցի և թաղցրի հինգ հազարը։

VIII

Աբրահամ աղայի թաղումից անցել էր մի տարի։ Ես գտնվում էի Բագվում։

Թամարը դեռ տանը նստած էր. նա սպասում էր փեսացուի, բայց փեսացու չը կար ու չը կար. աշխարհը չորացել էր, իսկ ժամանակը վաղուց էր անցել։ Աղա Գուլամեանցների համար Թամարը ոչ ծանր բեռն էր դառել, հարկաւոր էր այդ բեռնից մի կերպ ազատվել։ Բայց ինչպէս ազատվել։

Մի օր Մակար աղան հրաւիրեց ինձ իր առանձնասենեակը։ Հրաւիրեց եմ ասում, որովհետև այլ ես ինձ ոչ ոք հրամայել չէր կարող, իմ լեզուն երկարացել էր և աղա Գուլամեանցները այլ ես չէին կարող առաջվայ նման ինձ հետ վարվել ինչպէս մի ստրուկի, մի անային կենդանու հետ։

—Խրիստոֆոր Սերգէյիչ, հրամայեցէք նստէք—դարձաւ ինձ Մակար աղան, առաջարկելով ինձ աթոռը։

Ցեսնում էք—կօշկակար Սարգսի տղայ «եօրդա խաչին» այժմ Խրիստոֆոր Սերգէյիչ է դառել և գոռող աղա Մակար Գուլամեանցը նրան աթոռ է առաջարկում։

—Ինչ էք կամենում ասել, Մակար Պետրովիչ—ասեցի ես համարձակօրէն «աղայի» փոխարէն Մակարի պոչին կպցնելով «Պետրովիչը»։

—Ոչինչ, մի փոքր ուզում եմ քեզ հետ ժամանակ անցկացնել։ Այ տղա, Գալուստ, շուտ արա սուրճը բեր—դարձաւ նա ծառային։

Ես չը հաւատացի Մակար աղային, թէ նա ինձ հրաւիրել է լոկ ժամանակ անցկացնելու համար։ Նայելով նրա դէմքին ես իսկոյն հասկացայ, որ անշուշտ մի կարևոր գործ ունէ նա ինձ հետ։

Ծառան երկու բաժակ սուրճ բերեց։

—Հրամայեցէք, Խրիստոֆոր Սերգէյիչ, վերցրէք ձեր բաժակը—դարձաւ դէպի ինձ Մակար աղան վերին աստիճանի քաղաքավարութեամբ։

Ես, ճշմարիտն ասած, մինչև այն օրը սովոր չը լինելով Մակար աղայի այդ տեսակ յարաբերութեան, խիստ խորթ թւաց ինձ նրա վարմունքը և ես մի փոքր յուզվեցի։ Թէև այլ ես ոչինչ կախումն չունէի ոչ օրից, որովհետև արդէն ապահովված էի, ինն տարի ծառայելով աղա Գուլամեանցներին, ինն տարի ուրիշների հրամանները կատարելով, ինն տարի նրանց ձեռքում հասարակ մեքենայի դեր կատարելով, ես կամայ ակամայ կորցրել էի իմ ինքնուրոյնութիւնը, մեռցրել էի իմ սեպհական զգայմունքները։ Ընտանեկան և առևտրական զանազան գործերի վրա խօսելուց յետոյ Մակար աղան յանկարծ խօսակցութեան նիւթը փոխեց։

—Խրիստոֆոր Սերգէյիչ, քանի տարի է, որ դու մեր գործերում ծառայում ես—հարցրեց նա յանկարծ։

—Անցեալ գարնան ինը տարին լրացաւ, այժմ տասներորդն է—պատասխանեցի ես։

—Քանի տարեկան կը լինէիր մեզ մօտ մտնելու ժամանակ։

—Տասն և եօթ տարեկան։

—Ուրեմն այժմ քսան և վեց տարեկան ես։

—Տասն և եօթ, այն էլ ինը—այո, ուղիղ 26 տարեկան եմ։

—Բաւական մեծացել ես, ասաց Մակար աղան ժպտալով։

—Այո, փոքր առ փոքր մօտենում եմ ծերութեան։

—Ի՞նչ ես ասում, դեռ քո ծերանալու ժամանակը չէ, ապրել է հարկաւոր քեզ։ Քեզ նման ջահիլ տղերանց՝ ծերութեան մասին մտածել հարկաւոր չէ։

—Այժմեան ջահիլները ձեզանից շուտ են պառաւում, Մակար Պետրովիչ։

—Քո ասածը ճշմարիտ է, բայց գիտես ինչից է այդ։

—Ինչից է, Մակար Պետրովիչ,—հարցրի ես, հետաքրքրութեամբ։

—Նրանից, որ այժմեան ջահիլները չեն պակվում և իրանց կեանքը անց են կացնում չարայութիւնով։

—Պակվողները միթէ չեն պառաւում։

—Պառաւում են, բայց ժամանակին և ոչ թէ չը պակվողների նման մի քսան տարի ժամանակից առաջ։ Ես պակվելիս 37 տարեկան էի բայց այս վեց տարում ես բաւական զանազանութիւն եմ դտնում իմ առաջվայ և այժմեան առողջութեան մէջ և շատ ափսոսում եմ, թէ ինչու մի տասը տարի էլ առաջ չը պակվեցի։ Ես այժմ եմ հասկանում, թէ պակվելը ինչքան օգտաւէտ է մարդուս. սխալված եմ համարում այն մարդուն, որը ժամանակին չէ պակվում։

—Լաւ կը լինէր, եթէ ամեն մարդ կարողութիւն ունենար և պակվէր, բայց շատերը իրանց չոր գլուխը չեն կարողանում պահել. ինչպէս կարող են ընտանիք պահել, որ պակվեն։

—Ով որ ուզենայ պակվել, կարողութիւն էլ կը գտնի։

—Ո՞րտեղից է կարող գտնել որ չը կայ։ Օրինակ, ինձ նման մարդը ինչպէս կարող է ծառայելով ընտանիք պահել—ասեցի ես դիտմամբ հասկանալով մասամբ Մակար աղայի միտքը։

—Քանի որ մարդ մենակ է, Աստուած էլ նրան մէկի ապրուստն է տալիս, բայց երբ որ նա պրակվի՝ Աստուած նրա ընտանիքի հոգսն էլ կը քաշէ։ Օրինակ, դու այժմ մենակ ես, նա քեզ քո ապրուստը տալիս է, բայց երբ պակվես՝ քո ընտանիքի հոգսն էլ կանէ։

—Եթէ իմանամ որ Աստուած կարողութիւն կը տայ ապրելու, հէնց վաղը կը պակվեմ։

—Փորձիր և տես կը տայ թէ ոչ։ Արի, ճշմարիտ Խրիստոֆոր Պետրովիչ քեզ պակենք, քեզ համար հէնց վաղուց եմ մտածում, որ հարկաւոր է քեզ պակել և շատ ժամանակ է, որ մի լաւ, սիրուն աղջիկ աչքի առաջ ունեմ քեզ համար—ասաց Մակար աղան կրկին ժպտալով։

—Ո՞վ է այդ աղջիկը, Մակար Պետրովիչ, ես

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 62 կ., չորրորդ 94 ր. 37 կ., հինգերորդ 94 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 219 ր. 50 կ., երկրորդ 208 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր., երկրորդ 92 ր., երրորդ 92 ր., ոսկի 8 ր. 43 կ։ Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ $23^7/_{16}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա $199^1/_2$ մարկ, փարիզի վրա $246^1/_4$ ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբերի։ Մեծ իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ նոյեմբերի 15-ին Ալեքսանդրովի մէջ նշանված է իշխանուհի Ելիսավետա Սակսեն-Ալտենբուրգեան, Սակսոնեան դքսուհու հետ։ Հրատարակվում են պետական գանձարանի կարճատև պարտականութիւնները 12-դ կարգի քսան միլիոն դումարի, ժամանակամիջոցը նոյեմբերի 10-ից հաշուելով։ Դրամագլուխը վերադարձվում է 1884 թ. մայիսի 10-ից վեց ամսվայ շահով տարեկան 4% հաշուելով։ Սենատը երէկ հաստատեց Ս. Պետերբուրգի նահանգական դատարանի վճիռը մասնաւոր գիմնազիայի նախկին դիրեկտոր Բիչկովի գործի մասին։ Արտաքին գործերի մինիստրութեան ասիական բաժնին կից օֆիցերների համար բացված կուրսերը արևելեան լեզուների արդէն սկսվեցան։ Ընդամենը ընդունված են 8 օֆիցերներ։ Բացի պարսկական, արաբական և թիւրքաց լեզուներից կաւանդվեն յունական և ֆրանսիական լեզուներ և միջազգային և մահմետական իրաւաբանութիւն։

ՕԴԷՍՍԱ, 19 նոյեմբերի։ Առևտրական դատարանը մերժեց Ֆիխտենհոլցի պարտատերերի խնդիրքը նրան մնանկ յայտնելու մասին, որովհետև նա իր կնոջը հաստատմաթուղթ է տուել գործավարութեան մասին։

ԿԻԵՎ, 19 նոյեմբերի։ Բաղօմիսլու ձիաներ գողացողների խումբի գործի մասին դատարանը վճռեց. մեղադրվածներից 42-ին սիբիր աքսորել և 43-ին կալանաւորների բաժինները ուղարկել 1 տարի և 8 ամիս ժամանակով։ Զինուորական դատարանը դատապարտեց շտաբս-կապիտան Գոդունովին զրկել բոլոր իրաւունքներից և աքսորել Տոմսկի նահանգը գանձարանին սայլեր հատցնող կապալառուի հետ ապօրինի համաձայնութիւն կայացնելու և զինուորներին առանց վարձի իր սեփական աշխատանքները կատարել տալու համար։

ԱԽՏԻՐԿԱ, 19 նոյեմբերի։ Ս. յատեղ ամբուրդով ծախվում է գործարանատէր Վինոգրադովի 900000 վեդրո հացի սպիրտը ակցիզ և 290000 ր. տուգանք վճարելու համար կոնտրոլ անող գործիքը չը գործածելու պատճառով։

ԿԻԵՎ, 19 նոյեմբերի։ Դնեպրի ջուրը աւելանում է։ Սառուց չը կայ։ Ճանապարհորդական շոգենաւերը շարունակում են ընկյսէր Կիեվի և Զերկասկի մէջ։ Ապրանքների նաւերը Դնեպրի և Պրիպէտիի վրա նաւեր են քարշ տալիս դէպի բարձր։

ՍՕՖԻԱ, 19 նոյեմբերի։ Հրաման է հրատարակված ռուսաց չորս օֆիցերներից յանձնաժողով նշանակելու մասին ժողովրդական գինաւորութեան օրէնքը վերաքննելու համար։

ՏԻԵՆՏՋԻՆԳ, 19 նոյեմբերի։ Ֆրանսիան Պեկինի մէջ պատրաստականութիւն յայտնեց շարունակել բանակցութիւնները և մի և նոյն ժամանակ յայտնեց, որ ֆրանսիական զօրքերին հրամայված է յարձակվել Սօնտայի և Բակնինգի վրա։

ՓԱՐԻԶ, 19 նոյեմբերի։ Պատերազմական և քաղաքային իշխանութիւնը Տօնկինի մէջ կենտրոնացած է Ծովապետ Կուրբէի ձեռքին։ Զինացիների յարձակումը Խանդզոունգի վրա հաստատվում է։ Զինացիները յետ մղվեցան։ Զինացիները կորցրին 200 սպանվածներ, իսկ ֆրանսիացիները 4 սպանվածներ և 24 վիրաւորվածներ։

ՍԱՄԱՐԱ, 19 նոյեմբերի։ Վոլգայի վրա ամբողջապէս սառուց է լողում։ 3° ցուրտ է։

ՍԱՐԱՏՕՎ, 19 նոյեմբերի։ Ս. յատեղ եկաւ առաջին ձիւնը։ Եղանակը տաք է։ Վոլգայի վրա թանձր սառուց է լողում։

ԼՕՆԴՈՆ, 19 նոյեմբերի։ Ս. յսօր սկսվեցաւ Օգոնելի գործը, որ մեղադրվում է Դուբլինի դաւադիրներին մատնող կերրիի սպանման համար։ Մեղադրվածը հերքում է իր մեղաւորութիւնը, բայց պրոկուրորը պնդում է մեղադրանքը։

ԿԱՅԻՐԷ, 19 նոյեմբերի։ Սուակիմ ուղարկված եգիպտական 500 ժանդարմներից 268 հոգի ճանապարհին փախան։

ՕԴԷՍԱ, 19 նոյեմբերի։ Ս. յսօր կատարվեցաւ միտրոպոլիտ Դիմիտրիի թաղումը։ Հեռագիրներ ստացվեցան. Նիկոդիմ պատրիարքից ցաւակցութեան մասին և բոլգարական մինիստր Ցանկովից Սոֆիայի մէջ կատարված հոգեհանգստի մասին։ Հրէական սինագոգները Օդէսայում հոգեհանգիստ կատարեցին։ Հրէական հասարակութիւնը հանգուցեալի անունով ստիպենդիա է նշանակում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի։ Բարձրագոյն անուանի հրամանով ֆինանսների մինիստրին հրամայած է պետական անընդհատ-եկամուտաւոր բենտաներ հրատարակել 50,000000 ր. դումարի ոսկով 1881 թ. յունվարի 1-ի հրամանի համեմատ պետական բանկին 50,000,000 ր. հատուցանելու և երկաթուղիական շինութիւնների ծախսերը ծածկելու համար։ Բենտաները հրատարակվում են 125 ր., 500 ր. և 1000 ր. արժողութեամբ և ընդ միշտ ազատվում են հարկից։ Տօկոսներ տարեկան վճարվում են կէս տարով. յունիսի 1-ին և դեկտեմբերի 1-ին սկսեալ եկող տարվայ յունիսի 1-ից։ Կառավարութիւնը իրաւունք է պահում յետ դնել բենտաները, սկզբնական գինը վճարելով, միայն թէ 10 տարիներից յետոյ։ Բենտաների վաճառումը յանձնված է պետական բանկին 98% գնից ոչ պակաս և ամեն օր կը կատարվի բանկի հեռաւեալ բաժիններում՝ Մոսկվայի, Ռիգայի, Կիեվի, Խարկովի, Օդէսսայի և Լեհական բանկի մէջ նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 5-ը և մի քանի միս բաժիններում պետական լրագիրների մէջ հրատարակելուց յետոյ նոյնպէս մինչև դեկտեմբերի 5-ը։ Առաջին մուտքը 10% մտցվում է յայտնելու ժամանակ, երկրորդ, երրորդ և չորրորդ մուտքերը յունվարի 14-ին, փետրվարի 14-ին և մարտի 14-ին 15% ամեն անգամ, հինգերորդ մուտքը 20% ապրիլի 14-ին և վերջինը 23% մայիսի 14-ին։ Բենտայի արժողութեան ամբողջապէս ներկայացնելը ժամանակից առաջ ընդունվում է տարեկան 6% հաշուելով յօգուտ գնողի։ Մետալական բուբլու գինը թղթադրամով բենտա գնելու ժամանակ կը յայտնվի լրագիրների և առանձին յայտարարութիւնների մէջ իր ժամանակին։ Նոյեմբերի 22—25 արված մուտքերի ժամանակ 164 կրեդիտային բուբլիները ընդունվում են մետալական 100 բուբլիների տեղ։ Տօկոսները հատուցանվում են գնողի ցանկութեան համեմատ ոսկով կամ թղթադրամով։ Ս. Պետերբուրգի առևտրական հասարակութիւնը ի յիշատակ Պետրովսկի ուսումնարանի օծման ժամանակ Նոցա Կայսերական Մեծութիւնների ներկայութեան որոշեցին ուսումնարանի մէջ հինգ ձրի վականսիաներ նշանակել Նորին Կայսերական Մեծութեան անունով։ Հասարակութիւնը դրա համար բարձրագոյն շնորհակալութեան արժանացաւ։ Արդարութեան մինիստրութիւնը մտադիր է աւելի բարձր տուգանքներ նշանակել երդվեալ դատաւորների դատարան չը գալու համար։

ԼՕՆԴՈՆ, 20 նոյեմբերի։ Կէրիին սպանող Օգոնել մահուան է դատապարտված։

ՍՕՖԻԱ, 20 նոյեմբերի։ Իշխանի հրամանով առաջարկված է ազգային ժողովին կարծիք յայտնել Տիրնովոյի կանոնագրութեան 8 և 9 յօդուածների փոփոխութեան մասին։ Ցանկով և նրա ընկերները առաջարկում են երկու ժողովներ ունենալ և իւրաքանչիւր 20000 բնակիչների համար մի պատգամաւոր։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

զիտեմ, որ ձեր հաւանած աղջիկը անպատճառ լաւը կը լինի,—հարցրի ես միամիտ ձեւացնելով ինձ։

—Մի երևելի, հարուստ և ազնիւ ընտանիքի աղջիկ, որի վրա շատերը աչք ունեն։

—Ո՞վ է այդ ընտանիքը։

—Մեր ընտանիքի նման մի ընտանիք է։

—Ես այս քաղաքում ձեր ընտանիքի նման ուրիշ ընտանիք չեմ ճանաչում։

—Որին որ ճանաչում ես հէնց այն է։

—Հաւատացնում եմ, որ ձեր ասածը ես չեմ հասկանում, Մակար Պետրովիչ։

—Այս բոպէին կը հասկանաս։

Մակար աղան դրանը խփեց և նոյն բոպէին իմ առաջ ներկայացաւ աղա Գուլամեանցների ամբողջ ընտանիքը։

Ես նկատեցի նրանց մէջ գլուխը քարշ ձգած և ամօթից կարմրած Թամարին, որի ձեռից բռնած՝ ներս բերեց Մակար աղայի ամուսինը։

—Այ քեզ այս այն ընտանիքը և այդ էլ իմ ասած աղջիկը, հլմ, այժմ ճանաչում ես թէ ոչ, լաւ մտիկ արա,—ասաց Մակար աղան, բռնելով Թամարի ձեռից և առաջ քաշելով։ Ես ամօթից կարմրեցի և չը կարողացայ ոչինչ խօսել։

—Զեռք ձեռքի տուէք, ես ձեզ վաղուց եմ իմ մտքում նշանել, բայց այսօր եմ յայտնում։

—Ես անզգայաբար ձեռս մեկնեցի Թամարին։ Գործողութիւնը այնքան յանկարծակի եղաւ, որ ես, ճշմարիտը ասած, մնացել էի շուարած։

—Ի՞նչ էք սառել, այ կնիկ, Գալուստին հրամայի շամպանսկից բերի։

Անցան առաջին վայրկեանները և ես փոքր առ փոքր ուշքի գալով, սկսեցի ուշադրութեամբ քննել իմ դրութիւնը։

—Ասուած շնորհաւոր անի, բարև շուտով պսակենք,—ասաց Մակար աղան, դատարկելով շամպանիայով լի բաժակը։

—Ամեն, ամեն, Աստուած շնորհաւոր անի,—կրկնեց ամբողջ ընտանիքը միաբերան։

—Ես առանց քահանայի նշանեցի, վաղը նրան էլ կը կանչենք, որ «պսահանիչը» ասի, որ բանը վերջանայ,—ասաց Մակար աղան, մի մեծ բրիլիանտի մատանի անցկացնելով իմ մատին, միւսը Թամարին։

«Եօրղա խաչի, բանդ չինվեց, բայց մի յափշտակվիր, ոտդ ամուր դիր»—մտածեցի ես իսկոյն։

—Մակար Պետրովիչ, ես արժանի չեմ այս փառքին։

—Ամենից արժանաւորը դու ես, ես հէնց մինչև այսօր Թամարին քեզ համար եմ պահել։

—Զէ, Մակար Պետրովիչ, ինձ նման աղքատ մարդը անարժան է ձեր նման հարուստ ընտանիքի փեսայ դառնալուն։

—Սուս արա. դատարկ, դատարկ մի դուրս տայ, աղքատին հարստացնելը Գուլամեանցների ձեռքում մի դժուար բան չէ։ Տան ու հինգ հազար մանէթ պրիդանը Թամարի գլխին է։

«Փառք Աստուծոյ, ես էլ հէնց այդ էի ուզում լսել քո բերանից»—ասացի մտքումս և մատանին քաշեցի մատիս։

—

Եօթ տարի է, որ ես Խրիստոֆոր Սերգէյիչ աղա Արուչանովս աղա Գուլամեանցների փեսան եմ։ Նստած եւյարկանի սեպհական տան մէջ, իմ առանձնասենեակում, գործերից ազատ ժամանակ, ես երբեմն երբեմն մտաբերում եմ իմ անցեալը և համեմատում նրան ներկայի հետ։ Յիշում եմ այն աղքատ ընտանիքը, այն խոնաւ և կեղտոտ բնակարանը, ուր ապրում էի ես տասն և եօթ տարի սրանից առաջ, յիշում եմ այն պատառոտված ցնցոտիները, ծակ կօշիկները, որ ես հագնում էի այդ ժամանակ, յիշում եմ ու համեմատում եմ այժմեան դրութեան հետ և ինքս ինձ վրա զարմանում։ Յիշում եմ այն օրը, երբ հայրս հրաւիրելով իր բարեկամներին մեր տուն, տէր Վահակի մօտ ուսումս աւարտելուց յետո, իմ ապագայի մասին խորհրդակցելու, յիշում եմ դարբին Մարութի տուած յիմար խորհուրդը, որ ես արհեստաւոր դառնամ, յիշում եմ և իմ այժմեան դրութիւնը համեմատում եմ Մարութի որդու դրութեան հետ, որը նոյնպէս պարապում է դարբնութեամբ և որը այսօր իր հօր նրման կեղտի և մուրի մէջ հազիւ հաց քաշքշում է իր կեանքը, յիշում եմ և փառք տալիս Աստուծուն, որ իմ հայրս չը հետևեց դարբնի խորհրդին։ Իսկ ինչ վերաբերում է մանրավաճառ Թորոսին, որը այսօր մեր քաղաքի մէջ առաջին դրամատէրն է՝ ես նրա տուած խրատները երբէք չեմ մոռացել և չը պիտի մոռանամ մինչև իմ կեանքի վերջը։ Մտաբերում եմ նրա հօրս ասած խօսքերը—թէ «տուր խաչիին մի վաճառականի մօտ գործակատար և նա շուտով կը գտնէ փող աշխատելու գաղտնիքը, մտաբերում եմ նրա խրատը թէ «կեղծաւորիր և չողոքորթիր քեզանից մեծերին և զօրեղներին, սուտ ասա և խաբիր քեզանից թոյլերին, եղիր խորամանկ ինչպէս օձ, միամիտ՝ ինչպէս ոչխար»։

Ես այդ բոլորը արել եմ և պիտի անեմ այսուհետև. ես գրաւեցի աղա Գուլամեանցների հաւատարմութիւնը նրանց «կեղծաւորելով, չողոքորթելով» և մտայ նրանց դրպանը. ես հարստահարել եմ մշակներին և արհեստաւորներին «սուտ ասելով, խաբելով». վերջապէս ես Թամարին խլեցի աղա Գուլամեանցներից խորամանկութեամբ և ամենաստոր միջոցներով»։

Այդ բոլոր ստորութիւնները ես արել եմ առանց ինքս ինձ հաշիւ տալու, առանց դիմելու իմ խղճին և նրանից թոյլտվութիւն խնդրելու։ Նոյնը անում եմ և այժմ աւելի ընդարձակ կերպով. ես կեղծաւորում, չողոքորթում և ստորանում եմ այն անձանց առաջ, որոնք ինձանից ուժեղ են և որոնցից ես շահ եմ սպասում. խաբում եմ և հարստահարում ինձանից թոյլերին, ճնշում և հալածում եմ իմ ձեռքի տակ գտնվող գործակատարներին, ծառաներին, մշակներին և արհեստաւորներին ինչպէս բռնակալ։ Ոչ ոք չէ կարող իմ կամքին դէմ կենալ, որովհետև ես փող ունեմ, ես հարուստ եմ և բոլորը ուզում եմ, որ իմ առաջ ստորուկներ լինեն։ Իմ կամքը պիտի լինի օրէնք ինձանից նիւթական կախումն ունեցողների համար, իմ «ես» պիտի լինի նրանց տիրապետողը և ոչ ոք չէ կարող նրանցից համարձակվել հակառակելու իմ կամքին, իմ ասին, որ է վաճառական Խրիստոֆոր Սերգէյիչ աղա Արուչանովը»։

Շիրվանզադէ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

СЪ I-ГО ЯНВАРЯ 1884 ГОДА

ВЪ ТИФЛИСѢ БУДЕТЪ ИЗДАВАТЬСЯ

новая ежедневная (350 нумеровъ въ годъ) литературно-политическая газета

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

подъ редакціею А. В. Степанова (бывш. редакторъ „Юридическаго Обозрѣнія“).

Объемъ газеты—печатный листъ средняго формата; программа—общая всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ.

Подписная цѣна съ пересылкою и доставкою: на годъ—**10** руб.; на **6** мѣсяц.—**6** р., на **3** мѣс.—**3** р. **50** к., на **1** мѣс. **1** р. **50** к.

Подписка (городская и иногородная) и объявленія (по 5 к. за **строку петита**) принимаются **въ Тифисѣ** исключительно **въ Газетномъ Агентствѣ В. Шавердова**, въ **С.-Петербургѣ-же и Москвѣ**—въ книжныхъ магазинахъ „**Новаго Времени**“.

Временное (до 15-го декабря) помѣщеніе редакціи: Давидовская ул., д. Канаквартира нова, редактора.

За газетой обезпечено **постоянное сотрудничество: кн. К. А. Бебутова, Вс. М. Гаршина, П. А. Измайлова, С. Н. Кривенко, Н. Я. Николадзе, П. А. Опочинина, А. Н. Плещеева, И. Ф. Тхоржевскаго, Гл. И. Успенскаго, Н. А. Шаврова.**

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա:

Միակ գործակալ **ԼՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ**: Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամէն ձևի 25% ուրիշ տեղ: Կան թուղթ, տետրակներ, քարեղգրիչներ, մկրատներ, խալիչամաշկներ, վերամարկու կախելու համար իրեր, գոտիներ, անօտներ, մատուցարաններ, բրիտանական մետալից իրեր, լամպներ, գդալներ, բաժակներ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտակալվեր, երկաթէ թելերից, ձիու համար: Մակենաշներ: Բժշկական թուղթ վատերկլոզեսի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ:

98—100

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Նոյեմբերի 26-ին նշանակելով հեռաւոր ամուրդները 1) վերայի կամուրջը տանող ճանապարհը քարահատակելու համար և 2) կիրօչնայա փողոցը Միխայլովսկայա փողոցից մինչև վերայի կամուրջը ուղղելու և քարայատակելու համար, հրաւիրում է այդ աշխատանքները վերցնել ցանկացողներին ներկայանալ ամուրդին 12 ժամին: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր 10 մինչև 2 ժամը:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՄՔԱՐՆԵՐ

ԻԻՐԻՒ ՖԷՕԴՈՐՈՎԻՉ ԱԽՎԵՐԴՈՎԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

1883 *թուականի հրատարակութիւն: Այդ գիրքը ծախվում է յօգուտ Արհեստից ուսումնարանի աղքատ աշակերտների, Շավերդովի լրագրական գործակալութեան մէջ:*

2—10

ԹԻՖԼԻՍԻ *տեխնիկական ուսումնարանի մօտ ծախվում է* **ԴԱՏԱՐԿ ՀՈՂ** *գնի մասին տեղեկանալ՝ Գօլովինսկի պրոսպեկտ, տուն Սարաջևի, № 14:*

5—6 (3)

ԱՌԱՋԻՆ

ՄԱՆԱՎՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՎԼՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՔԱՆԻ ՀԱՆԴԷՊ)—ՀԻՒԱՆԴՆԵՐԸ ԱՄԵՆ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ:

Ունի սենեակներ հիւանդների և ծերունդականների համար, օրական 2-ից մինչև 4 մանէթ և ամսական 50-ից մինչև 100 մանէթ վարձով: Երթևեկ հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.: Հիւանդանոցի բոլոր բժիշկների համախորհրդի (կոնսիլիում) համար 3 մանէթ, չքաւորները անվճար:

Հիւանդները ամեն օր ընդունվում են.

Առաւօտեան՝ 9—12 *ժամ,* ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—*վիրաբուժական, վեներական և աստամի ցաւերի համար:*

10—10½ *ժ.* ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—*մանկական և ներքին ցաւերի:*

11—1 *ժ. կին-բժիշկ* ՍԱԲՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—*կանանց, և երեխայոց ցաւերի:*

10—11 *ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ)* ԲԼՅԽ—*աչքացաւի:*

11½—12½ *ժ. (երկուշաբթի),* ԲԱԲԱՅԵԱՆ—*ներքին և ջղային ցաւերի:*

Երեկոյեան՝ 5½—6½ *ժ.*—ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—*ամեն օր:*

ՍԱԲՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—*երեքշաբթի և հինգշաբթի:*

ԲԱԲԱՅԵԱՆ *և* ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—*չորեքշաբթի և շաբաթ:*

*Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—*6½—7½ *ժամը երեկոյեան:*

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ *(բնակվում է նոյն հիւանդանոցում:)*

ՀԱՄԱԽՈՐՀՈՒՐԴ, *(կոնսիլիում) հիւանդանոցի բոլոր բժիշկների չորեքշաբթի և շաբաթ երեկոյեան* 6½—7½ *ժամը:—Հիւանդանոցի բժիշկները՝* ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ, ԲՈՒԴԿՕՎՍԿԻ, ՍԱԲՕԿԻՆԱ—ՇՁԵՐԲԻՆԻՆԱ, ԲԼՅԽ *և* ԲԱԲԱՅԵԱՆ:

КЕЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.

46—50

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** *վերադարձնող: Գինը 2 ր. շիշը,* **ՓՈՍՏՅՈՎ** *ուղարկված 2 ր. 49 կոպ.* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ*

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, *մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին զվարդաւէտ դէմ,* **ՏՈՒԱԼԻՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն:*

87—100

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1884 ГОДУ ЖУРНАЛА

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

(ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ).

Журналъ, какъ и прежде, будетъ выходить по четвергамъ въ размѣрѣ отъ 1 до 2 печатныхъ листовъ, по слѣдующей программѣ:

I. Статьи по **всѣмъ вопросамъ**, вытекающимъ **изъ теоріи права и судопроизводства**.—II. **Перечень, изложеніе и обсужденіе** важнѣйшихъ **распоряженій** и **узаконеній** правительства.—III. **Судебная хроника**: а) отчеты о засѣданіяхъ въ судахъ, преимущественно Кавказскаго края, и б) особенно интересныя рѣшенія Кавказскихъ гражданскихъ судовъ по вопросамъ права и судопроизводства, вызваннымъ мѣстными особенностями края.—IV. **Корреспонденціи** юридическаго содержанія.—V. Краткіе **отчеты о новыхъ книгахъ** юридическаго содержанія (Обзоръ юридической печати и библіографія).—VI. **Смѣсь** (разныя извѣстія). Случаи изъ судебной жизни и практики.—VII. **Тезисы** кассаціонныхъ рѣшеній: а) кассаціонныхъ департаментовъ сената и б) Тифлисской судебной палаты.—VIII. Извлеченіе **изъ приказовъ** о важнѣйшихъ назначеніяхъ по вѣдомству юстиціи.—IX. **Судебный указатель. Резолюціи** Тифлисской судебной палаты по дѣламъ **апелляціоннымъ** и **кассаціоннымъ**.—X. **Объявленія**—казенныя и частныя.

При всей трудности изданія юридическаго органа на далекой окраинѣ Россіи, необходимость и полезность такого органа на Кавказѣ доказывается вступленіемъ „Юридическаго Обозрѣнія“ въ **четвертый** годъ своего существованія. Въ настоящее время редакція заручилась сотрудничествомъ многихъ юристовъ, врачей и публицистовъ. Мы можемъ указать, какъ участниковъ въ нашемъ журналѣ: **К. Г. Анциферова, Д. З. Бакрадзе, Ѳ. А. Быкова, Ѳ. К. Бакало, Кн. К. А. Бебутова, Г. Г. Гвиніева, А. А. Гребенщикова, С. І. Гулишамбарова, Н. А. Дингельштета, К. В. Долгова, Г. А. Джаншіева, Г. И. Еджубова, Д. И. Кипіани, Д. В. Квиркеліа, П. И. Ковалевскаго, П. М. Лебединскаго, Я. И. Лудмера, Н. Я. Николадзе. П. А. Опочинина, Д. П. Пурцеладзе, Я. И. Рашета, Н. П. Смиттена, В. Д. Спасовича, А. В. Степанова, А. А. Ѳон-Ашеберга, В. А. Хлѣбникова, Н. А. Шаврова** и др.

Въ распоряженіи редакціи имѣются статьи, какъ мѣстнаго, кавказскаго, такъ и общаго интереса. Изъ числа ихъ предназначены къ печатанію въ 1884 году: **матеріалы для новыхъ Уложеній—Уголовнаго и Гражданскаго**, о **водовладѣніи** на Кавказѣ и другихъ мѣстахъ по законамъ: царя Вахтанга, шаріату и др., о **межеваніи**, о **пошлинахъ**. о **литературной**, и **музыкальной собственности**, о **нефтяныхъ** законахъ въ разныхъ странахъ, о **колоніяхъ** преступниковъ, о **сельской адвокатурѣ**, о **безпріютныхъ дѣтяхъ**, о формѣ **суда присяжныхъ** на Кавказѣ, о **хизанахъ**, о **саношенахъ**, о **древне-армянскомъ** законодательствѣ (изслѣдованія Мхитара-Гоша), о **мусульманскихъ** законахъ на Кавказѣ, о **древне-еврейскомъ законодательствѣ** и пр.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Редакція и администрація журнала (для пріема подписки, объявленій и розничной продажи)—Тифлисъ, Сололакская ул., д. кн. Меликова.

Подписная цѣна на журналъ, съ доставкою и пересылкою: на годъ—**10 р.; на 6 мѣс. 6 р.; на 3 мѣс.—3 р. 20 к.; на 1 мѣс.—1 р. 25 к.** Подписываться можно перваго числа каждаго мѣсяца **и не далѣе конца года**.

Разсрочка въ платежѣ денегъ допускается—**для годовыхъ** подписчиковъ: при подпискѣ 4 р., въ мартѣ и апрѣлѣ по 3 р., и **для полугодовыхъ**; при подпискѣ 3 р. и черезъ два мѣсяца еще 3 р.

При перемѣнѣ адреса вносятъ **40** к.

Объявленія, казенныя и частныя—строка петита **10** коп., ½ страницы **3** р. **25** к., цѣлая стран. **6** руб. **50** коп.

Подписка и объявленія принимаются также въ Москвѣ и Петербургѣ, въ книжныхъ магазинахъ **И. П. Анисимова.**

Отдѣльные №№ „Юрид. Обозр.“ продаются **по 25 коп. въ Тифлисѣ, въ Центральной книжной торговлѣ и** въ г. **Кутаисѣ**, въ книж. маг. **Чиладзе.**

Статьи должны имѣть подпись и адресъ ихъ автора, для свѣдѣнія редакціи, и могутъ подлежать **передѣлкамъ и сокращеніямъ.—Статьи безъ означенія условій гонорара признаются безплатными.— Обратная пересылка** рукописей для редакціи **не обязательна.**

При доставленіи въ редакцію „Юридическаго Обозрѣнія“ экземпляра юридическаго сочиненія, о немъ будетъ данъ отчетъ и сдѣлана публикація.

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ

ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՈՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կօշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքիք, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, աղլուխներ-բաղդադիք կովկասի ճարակով, շապիկներ, ժամացոյցներ, ոսկէ և արծաթէ: Ամեն տեսակ սպիտակեղէններ (շուշեղէն), որպէս են ստաքաններ, վազեր և այլն: Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ-գդալներ ֆրաժի ֆաբրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գլխարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով: Ծախվում են ֆաբրիկի գնով և առանց աւելցուկի (безъ-запроса): *Ընդունում է պատուէրներ օտար քաղաքներից ամեն տեսակ ապրանքների:*

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова.

ՄԱՆԻ

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Ноября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. части, Лорисъ-Меликовская ул., д. каз.